



ՀԱՊՀ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ  
ՄԻՋԱՐԳԱՅԻՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ  
«ԴԻՊԼՈՄԱ» ԾՐԱԳԻՐ

ԼԵՋՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ 2024



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Լեզվի ուսուցման փիլիսոփայություն
2. Նպատակներ
3. Լեզուների ուսուցման առաջարկներ
4. Լեզուների իմացություն
5. Հյուրընկալող երկրի լեզվի մասսայականացում
6. Ներառականություն և հավասար հասանելիություն
7. Մասնագիտական զարգացում
8. Գործընկերություն և հանրային ներգրավվածություն



## 1. ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

**Դպրոցի առաքելությունը.** ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը կրթում և դաստիարակում է լայնախոհ հետազոտողների, ովքեր ձգտում են աշխարհն ավելի լավը դարձնել:

**Դպրոցի տեսլականը.** Հզորացնել սովորողների հմտությունները և գիտելիքները՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ գլոբալ աշխարհում առկա մարտահրավերները հաղթահարելու համար:

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցում ընդունվում է լեզվի՝ որպես հաղորդակցման և ուսուցման հիմնարար գործիքի, ինչպես նաև ինքնության և մշակութային ինքնարտահայտման առանցքային տարրի դերն ու նշանակությունը: Այդ տեսանկյունից՝ քննական մտածողության կարողությունների, միջմշակութային հաղորդակցման և հանդուրժողականության զարգացումը, ինչպես նաև աշխարհայացքի և գլոբալ քաղաքացիական դիրքորոշման ձևավորումը մեծապես կախված են լեզվի իմացությունից:

Սակայն լեզուն ամեն ինչից առաջ մտածողության միջոց է, ուստի կարևոր է զարգացնել սովորողների՝ ճշգրիտ մտածելու և մտքերը հստակ արտահայտելու ունակությունը:

Դասավանդումը ոչ միայն սովորողներին սովորեցնելն է, այլև սովորողներից սովորելու գործընթացն է: Հետևաբար, ուսուցիչները պարտավոր են ոչ միայն դասավանդել, այլև ազատորեն հաղորդակցվել անզլերենով ինչպես դասերի ընթացքում, այնպես էլ դասերից դուրս: Դպրոցի առաքելությունն է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ սովորողները կկարողանան բացահայտել իրենց լեզվական ողջ ներուժը: Նպատակասլացությամբ, համառությամբ և քրտնաջան աշխատանքի շնորհիվ սովորողները կհասնեն ցանկալի նվաճումների: Համաձայն միջազգային բակալավրատի կանոնակարգերի՝ կարևորվում է մայրենի լեզվի խոր իմացությունը: Դպրոցն աջակցում է մայրենի լեզվի հմտությունների զարգացմանը՝ հնարավորություն ընձեռելով մայրենի լեզվով սովորելու հայագիտական (Հայոց լեզու, Հայ գրականություն, Հայոց պատմություն) և ազգային ինքնության արտահայտմանը կոչված այլ դասընթացներ: Զարգացնելով սովորողների՝ մայրենի լեզվի գործադրման կարողությունները՝ դպրոցը ձգտում է բարելավել նրանց ճանաչողական ունակությունները, քննական մտածողության հմտությունները և ակադեմիական ընդհանուր առաջադիմությունը՝ միաժամանակ նպաստելով անձնային և մշակութային աճին:

## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը՝ որպես միջազգային բակալավրատի ծրագրով կրթություն իրականացնող դպրոց, կարևորում է տարբեր օտար լեզուների իմացությունը՝ գլոբալ աշխարհում միջմշակութային փոխըմբռնման, հաղորդակցության և քաղաքացիության ամրապնդմանը նպաստելու համար: Հետևաբար,



դպրոցի լեզվական ուսուցման ծրագիրը բաղկացած է նաև անգլերեն և ռուսերեն լեզուների՝ Լեզու B, իմբային ուսումնասիրությունից, իսկ ավելի ուշ նախատեսվում է ուսումնական ծրագրում ներառել իսպաներեն, ֆրանսերեն և չինարեն լեզուների ուսուցումը:

Կիրառելով աշակերտակենտրոն ուսուցման և գիտակից հաղորդակցման մոտեցումները՝ Դպրոցը ձգտում է ստեղծել բարենպաստ և գրավիչ միջավայր, որտեղ սովորողները կարող են վստահորեն զարգացնել իրենց լեզվական հմտությունները: Օտար լեզուների վարժ տիրապետումն ապահովելու համար հատուկ ուշադրություն է դարձվում երեք հիմնական հմտություններին՝ խոսելուն, գրելուն և լսելուն: Ընդլայնելով բառապաշարը, ձևավորելով նախադասություններ կառուցելու հմտությունները և տիրապետելով ազատ հաղորդակցման կարողությանը՝ սովորողները ձեռք են բերում օտար լեզվով մտքերն արտահայտելու հնարավորություն: ՄԲ Լեզու B ռուսերեն դասընթացի նպատակն է սովորողներին ընձեռել հնարավորություն՝ խոսելու ավելի քան կես միլիարդ մարդու լեզվով, որն աշխարհում երրորդն է չինարենից և անգլերենից հետո: Համատեղելով աշակերտակենտրոն ուսուցման մեթոդները հաղորդակցման տեխնիկայի հետ՝ դպրոցը ձգտում է բարձրացնել օտար լեզուների դասավանդման արդյունավետությունը և ստեղծել հարմարավետ ուսուցման պայմաններ սովորողների համար:

Դպրոցը խրախուսում է հայերենով, ռուսերենով և անգլերենով երկխոսություններն ու ցուցադրումները, ինչը հնարավորություն է տալիս սովորողներին հասկանալ նախադասությունների կառուցվածքը, դարձվածաբանությունը և քերականական ձևերի օգտագործման տարբերությունները: Սովորողները մասնակցում են լեզվական ուսուցման նախագծերին, բացահայտում են կապեր լեզուների միջև, բոլոր երեք լեզուներով ազատորեն ընթերցում, գործնականում թարգմանում և վերլուծում են տեքստեր: Լրացուցիչ միջոցառումները, ինչպիսիք են կինոնկարներ դիտելը, երգեր լսելը, նպաստում են լեզվական հմտությունների հետագա զարգացմանը և մշակութային յուրահասկությունների ըմբռնմանը: ՄԲ առաքելությանը համահունչ՝ Դպրոցը հաստատագրում է, որ լեզուն հաջողությամբ սովորելու հիմնական գործոնը մոտիվացվածությունն է: Ստեղծելով խթանիչ ուսումնական միջավայր, որը նպաստում է հետաքրքրասիրության, քննական մտածողության և ինքնակրթության զարգացմանը՝ հնարավորություն է տրվում սովորողներին՝ ինքնուրույն ընտրելու լեզվի յուրացման իրենց ուղին: Բնականաբար, մոտիվացված սովորողներն ավելի արագ կհասնեն լեզվի իմացության լավ մակարդակի, ինչը սեր կսերմանի նրանց մեջ լեզուների նկատմամբ ողջ կյանքի ընթացքում: Օգտագործելով լեզվի ուսուցման համապարփակ մոտեցումը՝ Դպրոցը ձգտում է դուրս գալ հաղորդակցման սոսկ պարզ հմտությունների ձևավորման շրջանակից: Օժտելով սովորողներին լեզվական հաղորդակցման հմտություններով՝ նրանց հնարավորություն է տրվում՝ նավարկելու փոխկապակցված աշխարհում հարգանքով, հանդուրժողականությամբ և ըմբռնելու լեզվի՝ որպես հաղորդակցման, մշակույթների արտահայտման և անձնական աճի գործիքի հզոր ուժը:



### 3. ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Իրականացնելով միջազգային բակալավրատի <<Դիպլոմա>> ծրագիրը՝ ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը նպատակ ունի կրթելու բանիմաց, ուշիմ և հոգատար երիտասարդների, ովքեր ձգտում են ստեղծել ավելի լավ և խաղաղ աշխարհ՝ միջմշակութային փոխըմբռնման և հաղործողականության միջոցով:

Առաջարկվում է լեզուների ուսուցում առարկայական հետևյալ խմբերից:

1. Լեզվի և գրականության ուսուցում.

1.1 լեզու A. Լեզու և Գրականություն. հայերեն (SL / HL),

1.2 լեզու A. Լեզու և Գրականություն. ռուսերեն (SL),

1.3 լեզու A. Լեզու և Գրականություն. անգլերեն (SL / HL):

2. Լեզվի իմացություն.

2.1 Լեզու B. ռուսերեն (SL),

2.2 Լեզու B. անգլերեն (SL / HL):

- Համաձայն ՄԲ կանոնակարգի՝ լեզու A դասընթացը՝ լեզուն և գրականությունը, ընդգրկում է տարբեր ժանրերի, ժամանակաշրջանների և մշակութային համատեքստերի գրական և ոչ գրական տեքստերի լայն շրջանակ: Սովորողներն ուսումնասիրում են զանազան տեքստեր, վեպեր, պիեսներ, բանաստեղծություններ, ելույթներ և թվային լրատվամիջոցներ, որոնք օգնում են նրանց՝ խոր պատկերացում կազմելու լեզվի և գրականության մասին:

ՀՀ Հանրակրթության պետական չափորոշի համաձայն՝ պահանջվում է սովորեցնել Հայոց լեզու և հայագիտական առարկաներ հայոց լեզվով Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, ովքեր ընդունվել են օտար լեզվով կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններ:

- Լեզվի իմացության Լեզու B դասընթացը մշակելիս անգլերենի դասընթացների ուսուցիչները հատուկ ուշադրություն են դարձնում հետևյալ հրահանգներին.

1. Դասընթացը մշակելիս հաշվի են առնվում դրա նպատակներն ու առաջադրանքները, ինչպես նաև գնահատման համակարգերը:

1.1. Դասընթացի նպատակներն ու խնդիրները. ՄԲ DP լեզվի մակարդակի B դասընթացի համար հատուկ նպատակներն ու խնդիրները սահմանում են, թե սովորողները ինչ ձեռքբերումներ պետք է ունենան մինչև կիսամյակի ավարտը: Դրանք, ընդհանուր առմամբ, ուղղված են լեզվական հմտությունների բարելավմանը, միջմշակութային փոխըմբռնման խթանմանը և քննական մտածողության զարգացմանը:

1.2. Գնահատում: Լեզու B դասընթացը ներառում է տարբեր կարգի գնահատումներ, ինչպիսիք են գրավոր առաջադրանքները, բանավոր քննությունները, վիկտորինաները, փորձագիտական գնահատականները և գնահատման այլ ձևեր, որոնք օգնում են՝ գնահատելու ուսանողների ինչպես լեզվի իմացության մակարդակը, այնպես էլ ակադեմիական նվաճումները:



1.3. Երկու տարվա ընթացքում հինգ թեմաների հավասարաչափ բաշխում:

1.4. Սովորողներին ինքնուրույն սովորելու հնարավորության ընձեռեում:

1.5. Թեմատիկ շնորհանդեսների, տնային ընթերցանության, քննարկումների և այլ գործընթացների միջոցով ուսուցիչները ձգտում են զարգացնել սովորողների արդյունավետ և ինտերակտիվ հաղորդակցվելու հմտությունները, խթանել նրանց հետաքրքրություններն ու բազմակողմանի ընկալունակությունը:

Լեզվի իմացություն. Լեզու B ռուսերեն: Ռուսաց լեզու B դասընթացը բաժանված է երեք մասի: Նախ՝ սովորողները մասնակցում են տարբեր թեմաների շուրջ քննարկումների՝ շարադրություններ գրելու հմտությունները բարելավելու համար: Երկրորդ՝ կարդում են մի քանի ընտրովի հաստատվածներ ռուս հայտնի հեղինակների ստեղծագործություններից՝ ընթերցած նյութի ընկալումը բարելավելու համար: Երրորդ՝ դասընթացը ներառում է քերականության ուսումնասիրություն, որն ուղեկցվում է վարժություններով: Յուրաքանչյուր սովորող անհատական ուշադրության կենտրոնում է՝ կախված նրանց յուրահատուկ կարիքներից և լեզվի իմացության մակարդակից:

Լեզվի իմացություն. Լեզու B անգլերեն: Լեզու B ուսուցման ծրագրի նպատակն է սովորողների համար ստեղծել ուսումնական բարենպաստ միջավայր, որը խրախուսում է նրանց ինքնուրույնությունը, հետաքրքրասիրությունը և լեզվի հանդեպ սերը: Սովորողները յուրացնում են տարբեր հասկացություններ, գաղափարներ, որոնք նպաստում են՝ զարգացնելու և ամրապնդելու որոշումների կայացման և քննական մտածողության հմտությունները: Ծրագիրը նպաստում է սովորողների՝ տարբեր լեզուներով և հաղորդակցման տարբեր միջոցներով ինքնավստահ և ստեղծագործ արտահայտմանը: Որպես ՄԲ սովորողներ՝ նրանք խրախուսվում են՝ դառնալու հոգատար, ռիսկերին դիմակայող, հավասարակշռված, սկզբունքային, ազատամիտ անհատականություններ: Այս հատկությունները նպաստում են սովորողների՝ որպես հոգեպես առողջ քաղաքացիների լիակատար ձևավորմանը:

#### 4. ԼԵԶՎԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցում մայրենի և օտար լեզուների ուսուցումը սատարելու նպատակով կիրառվում է համապարփակ մոտեցում, որը ներառում է ինչպես լեզվական հմտությունների, այնպես էլ մշակութային փոխըմբռնումների զարգացումը: Անգլերենը, աշխարհում լինելով միջազգային լեզու, զգալի ազդեցություն ունի հաղորդակցման և կրթության վրա, մինչդեռ ռուսերենն ունի հարուստ գրական, երաժշտական, կինեմատոգրաֆիական և գեղարվեստական ժառանգություն:

Համաձայն ՄԲ ուսուցման փիլիսոփայության՝ Դպրոցի՝ լեզվական հմտությունները բարելավելու ջանքերը դուրս են գալիս ուսումնական ծրագրի շրջանակներից և հիանալի փորձառություն են տալիս սովորողներին:

• Անգլերենի իմացությունը բարելավելու համար հատուկ ուշադրություն է դարձվում ընթերցանության, գրելու, լսելու և խոսելու հմտությունների զարգացմանը՝ գիտակցելով լեզվին հմուտ և վստահ տիրապետելու կարևորությունը: Սովորողները խրախուսվում են՝ խաղային և շարունակական ուսուցման միջոցով կազմելու բառացանկեր,



սովորելու հումանիշներ և արտահայտություններ: Անգլերենի ուսուցումը խթանվում է նաև ծրագրային այլ միջոցառումների՝ կինոնկարների դիտման և դասարանական քննարկումների միջոցով:

• Նույն ձևով՝ ռուսերենը սովորեցնելիս ցույց է տրվում ռուս ժողովրդի մշակութային ժառանգությունը՝ կազմակերպելով այցելություններ ռուսական մշակութային կենտրոններ և ռուսական երաժշտության համերգներ: Այս գործողություններն ու փորձառություններն օգնում են սովորողներին՝ ավելի խոր հասկանալու լեզուն և մշակութային ժառանգությունը: Դպրոցի ուսումնական ծրագրում ներառվում են ռուսական երաժշտության, գրականության և կինոարվեստի իրողություններ, ինչը հնարավորություն է տալիս սովորողներին՝ ոչ միայն քննախույզ վերաբերվել այդ ոլորտներին, այլև խորացնել իրենց լեզվական իմացության մակարդակը և մշակութային իրազեկությունը: Այս նախաձեռնությունների իրականացումը և դրանց դրական ազդեցությունը լեզվի իմացության մակարդակի վրա կօգնեն սովորողներին՝ հասնելու գերազանց արդյունքների ինչպես անգլերենի, այնպես էլ ռուսերենի ուսուցման ընթացքում, կնպաստեն նաև մարդկային լեզվի առանձնահատկությունների ճանաչմանը:

Առաջադրանքների համակարգը ներառում է գրավոր առաջադրանքներ, բանավոր ստուգումներ, ինտերակտիվ ստուգումներ, գրավոր քննություններ, որոնցով ձևավորվում են գնահատականները:

Գրավոր առաջադրանքներ: Գրավոր առաջադրանքները, որոնցով գնահատվում են ուսանողների կողմից տեքստի ընկալումը, լեզվի իմացության մակարդակը և քննական վերլուծության կարողությունը, կազմում են գրավոր առաջադրանքների ընդհանուր միավորների մոտավորապես 15%-ը:

Սովորողների բանավոր հաղորդակցման հմտությունները, ներառյալ լեզվական գրագիտությունը, սահունությունը և քննադատական վերլուծության կարողությունը, կազմում են բանավոր գնահատման ընդհանուր միավորների մոտավորապես 15% - ը: Ինտերակտիվ գնահատումը, ինչպիսին են խմբային նախագծերը և դերային խաղերը, թույլ են տալիս գնահատել սովորողների համագործակցության, լեզվական պրակտիկայի և տեքստի վերլուծության ունակությունը դինամիկ միջավայրում, կազմում է ինտերակտիվ գնահատման ընդհանուր միավորների մոտավորապես 15% - ը:

**Գրավոր քննություններ.** Դասընթացի յուրաքանչյուր արդյունքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, տեքստերի ընկալումը և քննական վերլուծության կարողության գնահատականը կազմում է ինտերակտիվ գնահատման ընդհանուր միավորների մոտավորապես 15% - ը:

Գրավոր քննությունների համար պետք է տրվի վերջնական գնահատականի մոտավորապես 15%-ը:

Ամփոփիչ քննություններ. Յուրաքանչյուր կիսամյակի ընդհանուր գնահատականի մոտավորապես 40% - ը տրվում է ամփոփիչ քննությամբ:

• Ուսուցման լեզու չհանդիսացող օտար լեզվին լավագույնս տիրապետող սովորողներին աջակցություն ցուցաբերելու համար Դպրոցը մշակել է տարբեր համակարգեր,



որոնք նկարագրված են լեզվական քաղաքականության մեջ: Մա ներառում է՝ Լեզվի ինտեգրում, ATL ATT ինտեգրում, դասերից հետո լեզվական դասընթացներ, լեզվի հարստացման գործողություններ, մշակութային ներգրավվածություն և ընդարձակ էսսե (ԸԷ-ԷԷ), ուսումնական ծրագրին ինտեգրում, համայնքային ներգրավվածություն և CAS միջոցառումներ:

• Սովորողների կողմից լեզվի լավագույն յուրացմանն աջակցելու համար, եթե այն տարբերվում է Դպրոցում դասավանդվող լեզվից, դասաժամի ընթացքում կազմակերպվում են սովորողների լեզվամտածողությունը զարգացնող պարապմունքներ: Այս գործողությունները կարող են ներառել՝ լեզվական ինտեգրում, ATL-ATT, մշակութային ներգրավվածություն և ընդարձակ էսսե, ուսումնական ծրագրի ինտեգրում, համայնքում ներգրավում և CAS միջոցառումներ:

### 5. ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿՐԻ ԼԵԶՎԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՈՒՄ

Համաձայն ՀՀ Հանրակրթության մասին օրենքի՝ օտար լեզվով ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պետք է ստանան կրթություն Հայոց լեզու և հայագիտական առարկաների գծով: Այս պարտադիր պայմանը համապատասխանում է ՀՀ կառավարության կողմից սահմանված հանրակրթության չափորոշիչներին:

Ամենակարևոր ասպեկտներից մեկը դպրոցական համայնքում հյուրընկալող երկրի լեզվական քաղաքականությանն աջակցելն է՝ միջմշակութային փոխըմբռնումը և ինտեգրումը խթանելու համար: ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցում գիտակցում են՝ որքան կարևոր է հյուրընկալող երկրի լեզվով արդյունավետ հաղորդակցությունը՝ տեղական մշակույթը հասկանալու և ակադեմիական հաջողությունների հասնելու գործում:

Ստորև ներկայացված են հյուրընկալող երկրի լեզվի յուրացումը սատարող քայլերը.

✓ **Լեզվական ինտեգրում.** սովորողները քաջալերվում են՝ լիարժեք շփվելու տեղական համայնքի հետ, այցելելով թանգարաններ և տեսարժան վայրեր, մասնակցելով մշակութային միջոցառումներին: Խրախուսվում է նրանց մասնակցությունը արտադասարանական միջոցառումներին, համայնքային նախագծերին և այլ միջոցառումների, որտեղ կարող են շփվել հյուրընկալող երկրի բնիկ լեզվակիրների հետ:

Այս գործնական փորձը բարելավում է լեզվի իմացությունը և նպաստում միջմշակութային փոխըմբռնմանը:

✓ **Լեզվի դասընթացներ.** Ոչ բնիկ լեզվակիր սովորողներին առաջարկվում են լեզվի հատուկ դասընթացներ կամ լեզվի ուսուցման աջակցության նախագծեր՝ հյուրընկալող երկրի լեզուն սովորելու համար: Այդ դասընթացները նպատակ ունեն բարելավելու ընթերցանության, լսելու, խոսելու և գրելու հմտությունները, ինչը սովորողներին հնարավորություն է տալիս արդյունավետորեն շփվելու տարբեր միջավայրերում:

✓ **Լեզվի իմացության հարստացման գործողություններ:** Նախատեսվում են լեզվի իմացության հարստացման գործողություններ, ներառյալ ընկերների հետ հաղորդակցու-





մը, լեզվի ուսուցման համար առաջարկվող ծրագրերը, մշակութային սեմինարները, այցելություններ լեզվական ակումբներ: Այս գործողությունները սովորողներին շահագրգռում են՝ ուսումնասիրելու հյուրընկալող երկրի լեզուն և մշակույթը, հնարավորություն են տալիս՝ գործնականում կիրառելու իրենց լեզվական հմտությունները բնական միջավայրերում և խորացնելու տեղական մշակույթի վերաբերյալ իրենց պատկերացումները:

✓ **Մշակութային ներգրավվածություն և ընդարձակ էսսե (ԸԷ-ԵԵ).** Սովորողները կարող են ընտրել իրենց ընդարձակ էսսեի թեմաները, որոնք առնչվում են հյուրընկալող երկրի լեզվին, մշակույթին և լեզվական ասպեկտներին: Էքսկուրսիաների, դաշտային ուղևորությունների, ընտանեկան ծրագրերի միջոցով սովորողները կարող են ձեռք բերել գիտելիքներ, անհրաժեշտ տեղեկություններ և հետազոտության համար տվյալներ խորապես հասկանալու և իրենց ԸԷ-ն գրելու համար:

✓ **Ինտեգրում ուսումնական պլանով.** ուսումնական պլանում ներառված են հյուրընկալող երկրի լեզվին և մշակույթին առնչվող առարկաներ՝ տեղեկություններ ընդգրկող երկրի պատմության, գրականության, արվեստի և սոցիալական խնդիրների մասին: Այս բազմառարկայական մեթոդիկան նպաստում է լեզվի և նրա մշակութային ժառանգության համապարփակ ընկալմանը:

✓ **Համայնքային միջոցառումներ և CAS (ՄԳԳ).** Դպրոցը ոգեշնչում է սովորողներին՝ ակտիվորեն մասնակցելու տեղական համայնքի միջոցառումներին, լեզվի ուսուցման համար առաջարկվող ծրագրերին, ընթերցանության ակումբներին, երկլեզու թարգմանչական միջոցառումներին, կամավորական արշավներին կամ պրակտիկային, համատեղելով այդ փորձը CAS-ի հետ: Շփվելով հյուրընկալող երկրի բնիկ լեզվակիրների հետ՝ զարգանում է սովորողների մշակութային բազմազանության խոր ըմբռնումը, և մեծանում են նրանց լեզվական ու միջմշակութային շփման կարողությունները, որոնք համապատասխանում են CAS-ի պահանջներին:

Այս ջանքերի շնորհիվ՝ ստեղծվում է բազմազան և ներառական ուսումնական միջավայր, որտեղ սովորողները պատրաստվում են գլոբալ հասարակության մեջ գործելուն և հաջողությունների հասնելուն:

## 6. ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցի առաքելության իրագործման կարևոր ասպեկտներից է և համապատասխանում է ՄԲ ծրագրի սկզբունքներին ու արժեքներին: Դպրոցը ձգտում է ստեղծել ներառական ուսումնական միջավայր, որտեղ տարբեր հիմնարար գիտելիքների և հմտությունների մակարդակներով սովորողները կարող են միասին աշխատել, սովորել և հաջողության հասնել: Այսպես են խթանվում ներառականությունը և հավասար հասանելիությունը Դպրոցում:

✓ **Բազմազանության գնահատում.** Դպրոցն ընդունում և գնահատում է յուրաքանչյուր սովորողի յուրահատուկ ներդրումը ուսումնական գործունեության մեջ: Բոլոր սո-



վորողներն իրենց զգում են համայնքի լիարժեք անդամ՝ պաշտպանված, գնահատված ներառական միջավայրում: Համագործակցության և ներառական մշակույթ ստեղծելու համար ծնողներն ու սովորողները ակտիվորեն մասնակցում են ուսումնական նպատակների սահմանման և որոշումների կայացման գործընթացներին (կանոնավոր հաղորդակցություն, ծնող-ուսուցիչ համագործակցություն, հարցումներ և հետադարձ կապ, ծնողների վերապատրաստման ծրագիր):

✓ **Աջակցող անձնակազմ.** սովորողների ուսուցման բազմազան կարիքներն ու նախասիրությունները բավարարելու համար Դպրոցը հավաստիանում է, որ բոլոր աշխատակիցներին հասանելի են անհրաժեշտ ռեսուրսները, աջակցությունը և վերապատրաստումը: Օգնելով ուսուցիչներին՝ բավարարելու յուրաքանչյուր սովորողի կարիքները դասարանում, մասնագետները և նրանց օգնականները կարևոր դեր են խաղում ներառական կրթության մեջ: Իրականացվում է ուսուցիչների և բոլոր աշխատակիցների անգլերեն լեզվի վերապատրաստում:

✓ **Ներառական ուսումնական պլան.** Դպրոցի ներառական ուսումնական պլանում ներառված են տեղական պայմաններին համապատասխանող թեմաներ, ինչպես նաև համատեղ ներդրումներ մարզինալացված խմբերից և փոքրամասնություններից: Բացառվում են կրկնվող նյութերը, ուսումնական պլանը համապատասխանեցվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների ուսուցման ոճերին: Այս մոտեցումը նպաստում է համապարփակ կրթության իրագործմանը՝ գնահատելով յուրաքանչյուր սովորողի փորձն ու հեռանկար ային ձգտումները:

✓ **Ծնողների ներգրավվածություն.** Դպրոցում լիովին ընկալվում և գնահատվում է ծնողների ներգրավվածությունը ներառական կրթության մեջ: Հաղորդակցման ավանդական մեթոդների կիրառումից բացի, դպրոցն ակտիվորեն որոնում է բազմազան մոտեցումներ և ուղիներ՝ ներգրավելու ծնողներին ըստ իրենց նախասիրությունների: Ծնողների հետ համագործակցությունն օգնում է՝ ապահովելու աջակցություն յուրաքանչյուր սովորողին՝ հաջողության հասնելու համար:

✓ **Համագործակցություն համայնքի հետ.** ներառական կրթությունը հավաքական պատասխանատվություն է: Դպրոցը համագործակցում է շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ բոլոր ուսուցիչները, սոցիալական աշխատողները, ծնողները և սովորողները: Կրթական ծրագրերի մշակման, իրականացման և մոնիտորինգի գործում համայնքի մասնակցության միջոցով Դպրոցը ստեղծում է բարենպաստ և ներառական միջավայր՝ ի նպաստ բոլոր սովորողների:

✓ **Ներառական պրակտիկան դասարանում.** ուսուցիչները կիրառում են ռազմավարություններ՝ դասարանում անվտանգ և ներառական համայնք ստեղծելու համար: Ծանոթանում են յուրաքանչյուր սովորողի կարիքներին՝ ստեղծելով ուսումնական բարենպաստ միջավայր, որտեղ սովորողները հարմարավետ են զգում իրենց մտքերն արտահայտելու և փորձը փոխանակելու համար: Ուսուցման տարբեր ոճերին համապատասխան դասեր անցկացնելու համար օգտագործվում են տարբեր մոտեցումներ: Առա-



ջարկվում է բավարար գրականություն, և հրավիրվում են բանախոսներ՝ տարբեր տեսակետներ փոխանակելու համար:

✓ **Ներառական լեզվական քաղաքականություն.** դպրոցը խրախուսում է լեզվի ներառական օգտագործումը, որը կանխում է այլ մարդկանց վերաբերյալ ոչ ճիշտ ենթադրությունները և նպաստում կապերի հաստատմանը անհատների և համայնքների միջև՝ անկախ սեռից, ռասայից, խավից, տարիքից, ֆիզիկական տարբերություններից, էթնիկ պատկանելությունից, կրոնական համոզմունքներից, սեռական կողմնորոշումից, ընտանեկան կարգավիճակից և հաշմանդամությունից: Պահպանելով այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հավասար հասանելիությունը և ներառականությունը, ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը հավաստիանում է, որ իր յուրաքանչյուր սովորողը հնարավորություն ունի հաջողության հասնելու ուսման, սոցիալական և գործունեության այլ ոլորտներում: Դպրոցը հնարավորություն է ընձեռում սովորողներին՝ առավելագույնի հասցնելու իրենց կարողությունները ուսումնական համագործակցային և աջակցող մթնոլորտի միջոցով, որը խթանում է հանդուրժողականության և հարգանքի զգացումը բոլորի նկատմամբ:

## 7. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Լեզուների ուսուցման և դասավանդման ոլորտում դպրոցների ղեկավարների, ուսուցիչների, գրադարանավարների և մյուս աշխատակիցների որակավորման բարձրացումն ապահովելու, ինչպես նաև լեզվական քաղաքականությունը աշխատող փաստաթղթի վերածող համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ է իրականացնել լեզվի իմացության մակարդակի գնահատում, դասավանդման մեթոդների կիրառում, գնահատման ռազմավարությունների մշակում:

✓ Տեղեկություններ ստանալու համար տվյալների հավաքագրման համապատասխան մեթոդների սահմանում, ներառյալ աշխատակիցներին, թիրախային խմբերին հարցումները, հարցազրույցները կամ տարբեր մոտեցումների համադրությունը:

✓ **Հարցման անցկացում.** ներառում է հարցեր, որոնք վերաբերում են մասնագիտական զարգացման ոլորտներին: Հարցերը պետք է լինեն պատեհ, հստակ և հակիրճ: Օգտագործվում է բաց և փակ հարցերի համադրությունը՝ ինչպես որակական, այնպես էլ քանակական տվյալներ հավաքելու համար:

✓ **Հարցազրույցների անցկացում.** աշխատակիցների հետ անհատական կամ խմբային հարցազրույցների անցկացում՝ նրանց տեսակետներն ավելի խոր ուսումնասիրելու համար: Հարցազրույցի գործընթացն ուղղորդելու համար նախապես պատրաստվում են հարցերի կամ քննարկման թեմաներ:

✓ **Թիրախային խմբերի ձևավորում.** թիրախային խմբերը ձևավորվում են նմանատիպ գործառույթներ կամ պարտականություններ կատարող աշխատակիցներից: Կատարվում են լեզվի ուսուցմանը և դասավանդմանը վերաբերող հարցերի քննարկումներ՝ մասնակիցներից կարծիքներ և առաջարկներ հավաքելու համար:



✓ **Տվյալների վերլուծություն.** հարցումների, հարցազրույցների և թիրախային խմբերի միջոցով ստացված տվյալների հավաքագրում և վերլուծություն:

✓ **Առաջնահերթությունների սահմանում.** մասնագիտական զարգացման հիմնական ոլորտների բացահայտում տվյալների վերլուծության հիման վրա: Առաջնահերթ ոլորտների բացահայտում, որոնք անհապաղ ուշադրություն են պահանջում, և նրանք, որոնք կարող են լուծվել երկարաժամկետ հեռանկարում:

✓ **Տեղեկության բացահայտում.** մանրամասն զեկույցի ստեղծում, որն ամփոփում է պահանջների գնահատման արդյունքները՝ ներառյալ հավաքված տեղեկատվության ամփոփումը, հայտնաբերված հիմնական թեմաների կամ խնդիրների ցանկը և մասնագիտական աճի համար արված առաջարկները, որոնք հիմնված են սահմանված առաջնահերթությունների վրա:

✓ **Արդյունքների փոխանակում և քննարկում.** ակնարկի քննարկում համապատասխան շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ իշխանությունների, ղեկավարների, ուսուցիչների հետ: Հանդիպումների կամ քննարկումների կազմակերպում՝ արդյունքները վերլուծելու և լրացուցիչ արձագանքներ կամ գաղափարներ հավաքելու համար:

✓ **Ուսումնական սեմինարների կազմակերպում լեզվի ուսուցման և դասավանդման տարբեր ասպեկտների վերաբերյալ:** Սրանք կարող են իրականացվել փորձառու արտաքին փորձագետների կամ որակավորված ներքին աշխատակիցների կողմից: Թեմաները կարող են ներառել լեզվի յուրացման տեսություններ, դասավանդման արդյունավետ ռազմավարություններ, գնահատման մեթոդներ, տեխնոլոգիաների կիրառում և մշակութային առանձնահատկություններ:

✓ **Աշխատակիցների շրջանում համագործակցային ուսուցման և փոխադարձ վերահսկողության մշակույթի խթանում:** Մա կարող է ներառել լեզվի ուսուցիչների՝ միմյանց դասերի դիտարկումը՝ ապահովելով հետադարձ կապը և փոխանակելով լավագույն փորձը: Դրա մի մասը կարող է լինել լեզվի ուսուցիչների՝ միմյանց դասերի լսումը /դիտարկումը, մեկնաբանություններ տալը և լավագույն փորձը փոխանակելը: Այս ընթացակարգը խրախուսում է մասնագիտական զարգացումը և նպաստում լեզվական քաղաքականության իրականացմանը:

✓ **Ռեսուրսների փոխանակում և ուսումնական համայնքներ.** հարթակների կամ առցանց ծառայությունների ստեղծում, քննարկման հարթակների ստեղծում, որտեղ աշխատակիցները կարող են փոխանակել դասերի պլաններ, ուսումնական նյութեր և լեզուների ուսուցման հետ կապված այլ ռեսուրսներ: Այս գործողությունները խթանում են համագործակցությունը, խրախուսում են ստեղծագործականությունը և ապահովում են տարբեր գաղափարների ու պրակտիկայի շարունակական փոխանակումը:

✓ **Մասնագիտական զարգացման գնահատում.** Դպրոցը պարբերաբար գնահատում է մասնագիտական զարգացման ծրագրերի արդյունավետությունը հարցումների, հետադարձ կապի ձևերի և հետագա գնահատումների միջոցով: Մասնագիտական զարգացման ծրագրերի արդյունավետությունը գնահատելու համար դպրոցը պարբերաբար օգտագործում է հարցումներ, հետադարձ կապի ձևեր և հետագա գնահատումներ:



✓ **Վերանայում և կատարելագործում.** Դպրոցը պարբերաբար վերանայում է լեզվական քաղաքականությունը, որպեսզի համոզվի՝ այն համապատասխանում է կրթական չափանիշներին և լավագույն փորձին: Աշխատակիցները, սովորողները և ծնողները հետադարձ կապ են պահպանում քաղաքականության արդյունավետության վերաբերյալ: Ստացված մեկնաբանությունների հիման վրա քաղաքականությունը թարմացվում և փոփոխվում է ըստ անհրաժեշտության:

### 8. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցի համար ՄԲ լեզվական քաղաքականությունը մշակելիս չափազանց կարևոր է ընդգծել լեզվի ուսուցման կարևորությունը բոլոր առարկաների ոլորտներում: Որպեսզի բոլոր ուսուցիչները հասկանան իրենց պատասխանատվությունը որպես լեզվի խորհրդատուներ և արդյունավետ աջակցություն ցուցաբերեն հաղորդակցման համար, կարող են օգտագործվել հետևյալ ընթացակարգերը:

**Մասնագիտական զարգացում.** մանկավարժներին պարբերաբար տրվում են վերապատրաստման հնարավորություններ, ինչը նրանց օգնում է ավելի լավ հասկանալ լեզվի դերը ուսուցման մեջ: Առաջարկվում են դասընթացներ, սեմինարներ՝ նվիրված լեզվի դասավանդման արդյունավետ մեթոդներին, որոնք միտված են լեզվի արդյունավետ ուսուցմանը տարբեր առարկաների ոլորտներում:

**Լեզվական ուսուցման ինտեգրում.** ուսուցիչները խրախուսվում են՝ իրենց մասնագիտական առարկաների դասերին ներգրավելու լեզվական իմացությունը զարգացնող միջոցառումները:

**Լեզվական ակումբներ.** Դպրոցում ստեղծվում են օտար լեզուների ուսուցման ակումբներ, որտեղ սովորողները կարող են բարձրացնել օտար լեզուների իրենց իմացության մակարդակը: Ակումբներում կարող են կազմակերպվել լեզվական տարբեր միջոցառումներ, ինչպիսիք են լեզվական խաղերը, բանավեճերը, դերախաղերը և մշակութային տոնակատարությունները:

**Գրական ակումբներ.** Դպրոցը խրախուսում է սովորողներին՝ ստեղծելու գրական ակումբներ, որտեղ կարող են կարդալ և քննարկել տարբեր դարաշրջանների մշակույթները նկարագրող ստեղծագործություններ: Գրական վերլուծության շրջանակներում այս ակումբներում կարող են անցկացվել հեղինակային զրույցներ, տեքստեր գրելու և գրքեր կարդալու վարպետության դասեր՝ ընթերցանության նկատմամբ սերը արթնացնելու և լեզվի իմացության մակարդակը բարելավելու համար:

**Կինոակումբ.** Դպրոցը ստեղծվում է կինոակումբ, որտեղ ցուցադրվում են տարբեր լեզուներով կինոնկարներ՝ սովորողներին հնարավորություն տալով դիտելու և քննարկելու մշակութային տարբեր իրողությունները: Այս ակումբը կարող է կազմակերպել կինոփառատոններ, կինոդիտումներ և կինոյի հետ կապված այլ միջոցառումներ, որոնք նպաստում են լեզուների յուրացմանը և միջմշակութային փոխըմբռնմանը:



**Գրադարանային ակումբ և գրքերի նվիրատվություններ.** Դպրոցը ստեղծում է գրադարանային ակումբ, որը խթանում է սովորողների շրջանում ընթերցանությունը, գրագիտությունը և լեզվական ունակությունների զարգացումը: Դպրոցը խրախուսում է ակումբի անդամների ակտիվ մասնակցությունը գրքերի նվիրատվություններին, երբ սովորողները կարող են գրքեր նվիրել կամ համոզել ուրիշներին՝ գրքերի նվիրատվությամբ մեծացնել գրադարանի ֆոնդը: Գրքերը կարող են ընդգրկել տարբեր ժանրերի, լեզուների և ընթերցանության մակարդակների լայն շրջանակ՝ բազմազանությունն ու հասանելիությունն ապահովելու համար: Գրադարանային ակումբը տրամադրում է անհրաժեշտ ռեսուրսներ լեզուներ սովորելու համար և խրախուսում է սերը ընթերցանության նկատմամբ, զարգացնում է նաև համայնքային պատկանելության և ներգրավվածության զգացումը:

**Մայրենի լեզվի ակումբ.** Դպրոցը ճանաչում է յուրաքանչյուր սովորողի մայրենի լեզվի կարևորությունը և ստեղծում է ակումբ՝ խորացնելով սովորողների հարգանքը իրենց կողմից գործածվող տարբեր լեզուների նկատմամբ: Այս ակումբը կարող է կազմակերպել միջոցառումներ, զրույցներ և լեզվի դասընթացներ՝ սեփական լեզվի և մշակույթի նկատմամբ հպարտությունը խրախուսելու համար:

**Այցելություն թանգարաններ և մշակութային վայրեր.** Դպրոցը կազմակերպում է էքսկուրսիաներ դեպի թանգարաններ, պատմամշակութային վայրեր, կենտրոններ և այլ նշանակալից վայրեր՝ սովորողներին հնարավորություն ընձեռելով լիովին ներգրավվելու լեզվի և մշակույթի յուրացման գործընթացում: Այս այցերը կարող են ներառել մի շարք փոխներգործուն գործողություններ, էքսկուրսիաներ և սովորողների համար իրական միջավայրում իրենց լեզվական ունակությունները կիրառելու հնարավորություններ:

**Համագործակցային պլանավորում.** տարբեր առարկաների ուսուցիչները խրախուսվում են՝ համագործակցելու պլանավորման գործընթացում, քննարկելու և ճշգրտելու լեզվի ուսուցման հնարավորություններն ու պահանջները իրենց անհատական ուսումնական ծրագրերում: Այս համագործակցությունը կօգնի նրանց՝ զարգացնելու լեզվի ուսուցման միջառարկայական մոտեցումները:

**Ձևավորող գնահատում.** այս գնահատումն առաջարկվում է՝ սովորողների լեզվական իմացությունը ստուգելու և աճի ոլորտները բացահայտելու համար: Ակնկալվում է, որ սովորողներն իրենց լեզվական ունակությունների վերաբերյալ կստանան արձագանքներ ուսուցիչներից, ովքեր նպատակային օգնություն կցուցաբերեն նրանց լեզվական կարողությունները բարելավելու համար:

**Լեզվի աջակցության ծառայություններ.** Դպրոցը ստեղծում է լեզվի աջակցության խումբ՝ բաղկացած լեզվի մասնագետներից և էսսեները համակարգողից՝ աջակցություն ցուցաբերելու այն սովորողներին, ովքեր լրացուցիչ օգնության կարիք ունեն իրենց լեզվական հմտությունները զարգացնելու համար:

**Ծնողների ու համայնքի ներգրավում.** ծնողներն ու համայնքն ընդհանուր առմամբ ներգրավված են սովորողներին լեզվի զարգացման հարցում աջակցություն ցուցաբերելու



գործում: Պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ և տեղեկատվական նստաշրջաններ ծնողների համար՝ աջակցելու նրանց հասկանալ լեզվի կարևորությունը ուսուցման գործընթացում, և թե ինչպես կարող են նրանք տանը նպաստել երեխաների լեզվական հմտությունների զարգացմանը:

### ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

<https://www.limesurvey.org/surveys/marketing-surveys/lead-generation-surveys>

“Guidelines for developing a school language policy”, IBO, 2008

“Learning in a language other than mother tongue in IB programmes”, IBO, 2008

Article 7, Clause 6.1 of the Law on General Education

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908>